ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«23» դեկտեմբերի 2013թ

ՀՐԱՄԱՆ

№ 594

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՏԱԼՈԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1 հոդվածի համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հավանություն տալ բնակելի կառուցապատման էներգաարդյունավետ օբյեկտների օրինակելի նախագծերի կատալոգին և այն ընդունել կիրառման:

2. Նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հ. Պետրոսյանին՝ կատալոգը և դրանում ներառված բնակելի տների նախագծային փաստաթղթերը տեղադրել նախարարության ինտերնետային կայքում:

3. Նախարարության աշխատակազմի ճարտարապետության վարչության պետ Ս. Մկրտչյանին՝ կատալոգը և դրանում ներառված բնակելի տների նախագծային փաստաթղթերը էլեկտրոնային կրիչներով տրամադրել շահագրգիռ մարմիններին:

Նախարար՝ **Ս. Թադևոսյան**

Իսկականի հետ ճիշտ է

„23" XII 2013թ.